



ՆՈՐԱՕԺ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԲԷԱՄՅԱՆ

Հայկազուն եպիսկոպոս Արքահամյանը, ավագանի անունով Հայրիկ, ծնվել է Վանի Բերդակ գյուղում, երկրագործ գյուղացու ընտանիքում, 1903 թվականին: Ծնողների ծղավակների մեջ կրտսերն էր Հայրիկը և այդ իսկ պատճառով ամենասիրելին:

Համաշխարհային առաջին պատերազմին, 1915 թվին, պատանի Հայրիկը իր համաքաղաքացիների հետ գաղթում է իր ծննդավայրից և բազմահազար գաղթականների հետ հասնում Ղամարու, ապա հաստատվում Երևան:

1917 թվին, բազմաթիվ գաղթականների հետ վերադառնում են Վան, և հազիվ տունտեղ եղած, նոր արհավիրքներ են հասնում և նոր դժբախտության դուռ է բացվում Վասպուրական աշխարհի պատմական ու պատվական հայ ժողովրդի համար:

Գաղթականի ցուպը ձեռքին, տնաբանդ է լինում ողջ Վասպուրականը: 1918 թվին, պատանի Հայրիկը ծնողների հետ գաղթում է Սալմաստի վրայով դեպի Պարսկաստան: Ծանապարհին, տարագրության արյունոտ ուղիներում, նա կորցնում է իր ծնողներին, սիրելիներին, և ծնրավայրից քաջորական, սիրելիներից զրկված, կրկնակի որբացած, ընկնում է Իրաք (Բաղդադ) 1918 թվին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Նահ-Օմարի հայկական որջանոցը, նույն տխուր ճակատագրին ենթարկված իր ընկերների՝ Տ. Միոն, Տ. Նդիշե, Տ. Սերովբե և Տ. Հայրիկ եպիսկոպոսների հետ:

1922 թվին, պատանի Հայրիկը փոխադրվում է Երուսաղեմ, Արարատյան որբանոցը՝ իր ուսումը շարունակելու համար:

1923 թվին ուսումնատենչ երիտասարդ Հայրիկը մտնում է Դուրջան Պատրիարքի օրով Երուսաղեմում բացված Ժառանգավորաց վարժարանը, որի քառամյա դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո 1927 թվին սարկավազ է ձեռնադրվում Դուրջան Պատրիարքից, և 1930 թվին, ավարտելուց հետո հնգամյա աստվածաբանական դասընթացը կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Մեսրոպ եպիսկոպոս նշանյանից (ապա Պատրիարք):

Երիտասարդ, ժրաջան հոգևորականի առաջ բացվում է վանական, վարչական, կերթական, հովվական լաշն ասպարեզ:

1930 թվին նա կարգվում է Երուսաղեմի հայոց վանքերից Ս. Փրկչի և Ս. Աստվածածնի եկեղեցու տեսուչ: Միաժամանակ դասավանդում է Ժառանգավորաց վարժարանում և Ս. Թարգմանչաց վարժարանում:

1936—1941 տարիներին վարում է ձեռնհասորեն Ցաֆա քաղաքի հայոց վանքի տեսչությունն ու հայ գաղութի հովվությունը:

Վերադառնալով վանք, 1941—1955 թվերին նա ծառայում է Ս. Աթոռում որպես վանքի կալվածների ընդհանուր ղեկավար՝ կալվածոց տեսուչ անունով: 1951 թվից մինչև այժմ համատեղության կարգով վարում է նաև Ժառանգավորաց վարժարանի տեսչությունը: Հայկազուն եպիսկոպոսը միշտ էլ վարել է



պատասխանատու և ծանր պաշտոններ, անդամակցել է վանական-վարչական ժողովների և իրեն հատուկ ժրաջանությամբ, աշ-

խատասիրությամբ, արդարացրել իրեն վրստահված պաշտոնները:

1954 թվին նա իբրև պատգամավոր հանգուցյալ Գեորգ Զ. Վեհափառի թաղման, եկավ Հայրենիք և Ս. Էջմիածին, իբրև ներկայացուցիչ Երուսաղեմի Պատրիարքության:

1955 թվին նա ընտրվեց նորից պատգամավոր Երուսաղեմի Պատրիարքության կողմից՝ մասնակցելու Ազգային-եկեղեցական ժողովին և Կաթողիկոսի ընտրության:

Հայկազուն սրբազանը եպիսկոպոս ձեռնադրվեց և օծվեց 1955 թվի Հոկտեմբերի 6-ին, Ս. Էջմիածնում, Տ. Տ. Վազգեն Վեհափառ Կաթողիկոսի կողմից:

Հայկազուն սրբազանը ազնիվ, համեստ, աշխատասեր, բարի և հայրենասեր հոգևորական է, սիրված ու հարգված է, մեծապես, իր ծանոթներից և իր ժողովրդից: Նա, որպես հոգևորական, միշտ էլ գտնվել է իր կոյման և պարտականությունների բարձրության վրա:

Հայկազուն սրբազանի գրչին է պատկանում հայազորական կարևոր մի ուսումնասիրություն՝ Հովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառը և նրա թարգմանությունը, ծանոթագրությունն ու մեկնությունը:

Հայկազուն սրբազանը գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման և հասունության շրջանում: Ազգը և Եկեղեցին նրանից սպասում են նոր ծառայություններ: Սրբազանը կարգարացնի այդ վստահությունը:

ԳԵՐԱԾՆՈՐԸ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԹԱՆԵՍՅԱՆ

Պարզ և սրբազանը, ավագանի անունով նշնիկ, ծնվել է 1905 թվականին Փոքր Ասիայի Պալքեսիթ քաղաքում, պետական բարձրատիճան պաշտոնյայի բարեկեցիկ ընտանիքում: Նրա ապու պապերը գաղթել են Սյունիքից (Ղարաբաղ): Փոքրիկ նշնիկը ծնողների երեք զավակներից միջնեկն է եղել, որն իր նախնական կրթությունն ստացել է իր ծննդավայրի ազգային վարժարանում և ապա՝ Կոստանդնուպոլսում, Մինասյան դպրոցում, իսկ միջնակարգը՝ Կոստանդնուպոլսի հանրաժանոթ Կենտրոնական վարժարանում 1910—1922 թվերին: Մի տարի՝ 1923—1924 ուսումնական տարում աշակերտել է Մեսրոպ Նարոյան Պատրիարքի օրով վերաբացված Արմաշի դպրեվանքին, Արտավազը վարդապետ Սյուրմեյանի տեսչության օրով:

1925 թվին գալիս է Երուսաղեմ, աշակերտելու նորաբաց Ժառանգավորաց վարժարանին և հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի դասարանական և Ընծայարանի լսարանական բաժինը, 1930 թվին կուսակրոն քսհանս է ձեռնադրվում հանգուցյալ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանի ձեռքով, օծակից ունենալով Տ. Սիրոն, Տ. Հայկազուն և Տ. Սերովբե վարդապետների:

1930—1934 թվերին վարում է վանքի ավագ թարգմանի պաշտոնը, իսկ 1934—1936 թվերին՝ Ս. Աթոռի հյուրընկալ և հանդերձապետ:

1936—1939 թվականներին նշանակվում է Երուսաղեմի միջազգային կրոնական նշանակություն ունեցող պատմական Ս. Հարություն Տաճարի տեսուչ:

1940—1955 թվերին անդամ է վանքի վարչական գերագույն մարմնին՝ Տնօրեն ժողովին, միաժամանակ կատարելով վանքի գանձապետի պաշտոնը:

Պարզև սրբազանը լուրջ, կարգապահ, ավանդապահ, ինքնամոտի վանական է, որը իր վարչական-վանական ծանր ու պատասխանատու պաշտոններում զբաղվել է նաև սուրբգրական, պատմական, բանասիրական աշխատանքներով:

Նրա գրչին են պատկանում Ս. Տեղյաց վերաբերյալ մի շարք պատմական մենագրություններ, այսպես՝

1. «Ս. Հարության Տաճարի մեջ Ս. Լուսավորիչ եկեղեցին», 1942 թ., Երուսաղեմ, 48 էջ:

2. «Ս. Հարության Տաճարը և Քրիստոսի սուրբ գերեզմանը», 1946 թ., Երուսաղեմ, 48 էջ:

3. Ապա մի ընդարձակ ուսումնասիրություն 5-րդ դարի պատմիչ ոսկեգրիչ Եղիշեի մասին:

4. «Եղիշե պատմագիր և Վարդանանց Պատերազմը», 1951 թ., Երուսաղեմ, 224 էջ:

Պարզև սրբազանը համեստ, հավատավոր և պարտաճանաչ եկեղեցական է, որը միշտ պատվով և սրբությամբ է կատարել իր պարտականությունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու օգտին:



ԳԵՐԵԶՆՈՐ Հ Տ. ՍԵՐՈՎԵՆԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՃՆՈՒԿՅԱՆ

Գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, ավագանի անունով Արփիար, ծնվել է 1908 թվին Մոլմստան գյուղում, Վանա լճի գեղաձիծաղ ափերում, երկրագործ գյուղացու ընտանիքում:

1915 թվին, հայկական մեծ եղեռնի արյունոտ օրերին, Վասպուրականից հայկական մեծ գաղթականության խմբերի հետ, գոյություն անհավասար կռիվ մղելով և ազատվելով թշնամու շրջապատումից, Սալմաստի վրայով հասնում է Պարսկաստան: Պատանի Արփիարն էլ հավասար ողբերգություն բաժանում է իր հայրենակիցների տխուր ճակատագիրը և կորցնելով իր բոլոր սիրելիներին և հարազատներին, ընկնում է նահր-Օմարի (Իրաք) Հայկական տարագրելուց որրանոցը, ապա փոխադրվում է Երուսաղեմի Արարատյան որբանոցը և 1924 թվին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը: Ուսումնասիրում է և երիտասարդ Արփիարի առաջ բացվում են ուսման, գիտություն դռները: Հաջողությամբ և

փայլուն կերպով ավարտելով ժառանգավորաց վարժարանի և Բնծայարանի դասարանական և լսարանական բաժինները, 1930 թվին Երուսաղեմի Հայոց վանքի Մայր Տաճար Ս. Հակոբում կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Սիոն, Տ. Հայկազուն, Տ. Զգոն, Տ. Պարզև և Տ. Շավարշ վարդապետների հետ, լուսարարապետ և Պատրիարքական տեղապահ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանից:

1931 թվին, հոգեշնորհ Տ. Շավարշ վարդապետի ընկերակցությամբ, վանական իշխանության կողմից, որպես Կյուլպենկյան սան, ուղարկվում է Լոնդոնի համալսարանը՝ հետեւելու աստվածաբանական և սուրբգրական-մեկնողական դասընթացների:

1933 թվին բաղմակողմանիորեն պատրաստված, կայուն և խորը գիտություն մեծ պաշարներով վերադառնում է վանք, և լրջվում ժառանգավորաց և Ս. Թարգմանչաց վարժարաններում կրթական-դաստիարակչական աշխատանքներին:



1935—1936 ուսումնական տարում դասավանդում է Անթիլիասի դպրեվանքում, և ապա վերադասուցվում վանք, 1936 թվին նշանակվում է Ս. Թարգմանչաց վարժարանի տեսուչ:

1946 թվից համատեղությամբ կատարում է նա ժառանգավորաց վարժարանի տեսչությունը մինչև 1950 թիվը, երբ վանական իշխանության կողմից նշանակվում է Ս. Տեղյաց նվիրակ՝ Երուսաղեմի աղետյալների համար Սփյուռքում հանգանակություն կատարելու: Հանգուցյալ Վեհափառ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ը Իր հայրապետական բարձր կոնդակով հաստատում է նրան իրր նվիրակ և կոչ է անում Սփյուռքի մեր թեմերին՝ ընդունելու Ս. Տեղյաց նվիրակին, որը այդ առթիվ լինում է Եվրոպայում և հատկապես Հյուսիսային Ամերիկայում, Հարավային Ամերիկայում, և ապա մեծ հաջողությամբ կատարելով իր պարտքը, վերադառնում է Ս. Աթոռ 1952 թվին:

1953 թվին ընտրվում է Ֆրանսահայ թեմի առաջնորդ, իսկ Վեհափառ Հայրապետը, նույն թվին իր հայրապետական բարձր ուշադրության արժանացնելով Տ. Սերովբե վարդապետին, նրան նշանակում է Հայրապետական լիազոր պատվիրակ Եվրոպայի, հանգուցյալ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանի տեղ:

Սերովբե վարդապետը իր այս նոր ու պատասխանատու պաշտոնում էլ արդարացնում է իր վրա դրված հայրապետական բարձր վստահությունը. կազմակերպում և ղեկավարում է իր թեմը օրինակելի բժախնդրությամբ և գովելի նախանձախնդրությամբ՝ նվաճելով իր հայրենասեր և եկեղեցասեր հոտի որդիական սերն ու համակրանքը, արժանանալով հպիսկոպոսական բարձր աստիճանին:

Սերովբե սրբազանը, որպես Հայրապետական լիազոր պատվիրակ, միշտ էլ գտնվել է իր կոչման ու պարտականության բարձրության վրա: Նա իր համալսարանական կրթությամբ, իր բազմակողմանի զարգացումով, իր հայրենասիրությամբ և եկեղեցասիրությամբ, իր ուրույն տեղն է գրավում մեր բարձր հոգևորականության շարքերում: 25 տարի է ահա, ինչ Սերովբե սրբազանը աննահանջ սիրով ծառայում է Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Երկար տարիներ Սերովբե սրբազանը եղել է վանքում «Սիրոն» ամսագրի խմբագրական մարմնի անդամ: Սրբազանը հրատարակել է «Պատմություն Սրբոց Թարգմանչաց վարժարանի», 1948 թ., 48 էջ, և «Պատկերագիրը հայ Երուսաղեմի», 1950 թ., 69 էջ, Նյու-Յորքում, սքանչելի տպագրությամբ, պատկերազարդ, Ս. Երուսաղեմի արժույթ, հայ Երուսաղեմը ըստ արժանվույն ծանոթացնելու համար մեր ժողովրդին:

Պատկերագիրը լույս է ընծայվել հայերեն և անգլերեն լեզուներով: Պատկերագրի ամբողջ հասույթը հատկացվել է Երուսաղեմի հայոց վանքի և աղետահար դաղթականություն:

Սերովբե սրբազանը երիտասարդ է դեռ, նա գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման և հասունության շրջանում: Վստահ ենք, որ սրբազանը սրանից հետո ևս կշարունակի նույն եռանդով, նույն արդյունավետությամբ ծառայել հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, ի մխիթարություն մեր նորընտիր Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԼԵՆՑԱՆ

Գերաշնորհ Տ. Հայրիկ եպիսկոպոս Ասլան-
յանը, ավագանի անունով Սիմոն, ծնվել
է Աղբակում (Վան) 1909 թվին, գյուղի
ռեսի ընտանիքում: Մտողների 7 զավակների
միջնակն է եղել փոքրիկ Սիմոնը:

Փոքրիկ Սիմոնը մանկական վաղ հասա-
կից ճաշակել է որրության դառնությունը:

1915 թվին, Վանից դեպի Սալմաստ—Պարս-
կաստան տարագրության և նահանջի ճանա-
պարհի վրա, նա կորցնում է իր հոգեհատոր-
ներին, որոնք ընկնում են մարտի դաշտում,
թշնամու դեմ մղած անհավասար գոյության
կռվում, իսկ ինքը մահից ազատված հրաշ-
քով, վիրավոր սրտով, ընկնում է Պաքուպա-
յի (Իրաք) Տարագրելոց հայկական որբանո-
ցը, նույն տխուր ճակատագրին ենթարկված
բազմահարյուր հայ որբերի հետ: Այդ օրե-
րից, որբանոցի անուրախ շրջանից է սկսու-
վում մեր այժմյան շնորհալի եկեղեցական-
ների՝ Սիոնի, Հայկազունի, Սերովբեի, Եղի-
շեի, Հայրիկի ծանոթությունը, որը հետագա-
յում, Երուսաղեմի ժառանգավորաց վարժա-
րանում վերածվում է սրտառուշ բարեկամու-
թյան:

1922 թվին պատանի Սիմոնը, մի խումբ
խոստումնալից ուսանողների հետ փոխա-
դրվում է Երուսաղեմի Արարատյան որբանո-
ցը՝ է՛լ ավելի հիմնավոր հայեցի դաստիա-
րակություն ստանալու համար:

1924 թվին Սիմոնն ընդունվում է Երու-
սաղեմի ժառանգավորաց վարժարանը և այդ
օրվանից նրա կյանքն ու գործունեությունը
ընդմիշտ կապվում է այդ շատ սիրելի հուս-
տատության անվան հետ:

Մեծ հաջողությամբ ավարտելով ժառան-
գավորաց վարժարանի քառամյա դասըն-
թացը, երիտասարդ Սիմոնը սարկավազ է
ձեռնադրվում 1928 թվին Դուրյան Եղիշե
Պատրիարքի ձեռքով և մտնելով Ս. Աթոռի
միաբանության շարքերը, 1932 թվին ավար-
տում է Ընծայարանի աստվածաբանական
դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնա-
դրվում լուսահոգի Տ. Թորգոմ Պատրիար-
քից՝ օժակից ունենալով Եղիշե արքեպիս-
կոպոս Տերտերյանին, Տիրայր և Ասողիկ
վարդապետներին:

Երիտասարդ, գործունյա և զարգացած
Հայրիկ վարդապետի առաջ բացվում է վա-
նական-վարչական պատասխանատու պաշ-
տոնների ասպարեզը: Նա առավելապես վար-
չական գիծ ունեցող հոգևորական է: Եվ ահա
1933—1939 թվերին, նա մեծ սիրով և ձեռն-
հասորեն վարում է Ս. Հակոբյանց վանքի ա-
վագ թարգմանի պաշտոնը, որը մի տե-
սակ յուրահատուկ ներկայացուցչություն է,



Պատրիարքարանի և կառավարության, վան-
քի և մյուս կրոնական հարանվանություննե-
րի միջև:

«Սիոն» ամսագրում ունի կրոնաբարոյա-
կան, լեզվաբանական և իմաստասիրական
ինքնագիր և թարգմանված հոդվածներ:

Նույն տարիներին նա ժառանգավորաց
վարժարանում դասավանդել է զրարար ու
Հայ Եկեղեցու պատմություն:

1939—1941 թվերին Հայրիկ վարդապե-
տը, իրեն հատուկ վարչագիտությամբ, այն-
քան ձեռնհասորեն վարում է Երուսաղեմի
Հայոց Պատրիարքարանի բարդ և պատաս-
խանատու կալվածոց տեսությունը:

1941—1953 թվերին նա անդամ և ատենա-
պետ է նշանակվում Տնօրեն ժողովի և վանքի
կլեմտական գործերի ընդհանուր հակակը-
նող:

1947—1955 թվերին, համատեղության
կարգով, կատարում է Պատրիարք վանքի ավագ
թարգմանի պաշտոնը:

Հայրիկ սրբազանը ազնիվ, սրտբաց, հյու-
րասեր, բարի հոգևորական է: Նրա հոգևո-

բական համեստ սեղանը միշտ բաց է եղել ամենքի առաջ:

Հայրիկ սրբադանը Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության հանաչված, ամենասիրված դեմքերից մեկն է և ներկայումս կատարում է դիվանապետի պաշտոնը:

1954 թվին նա առաջին անգամ եղել է Մայր Հայաստանում և Ս. էջմիածնում, հանգուցյալ Ս. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի թաղման տխուր առիթով:

Հայրիկ վարդապետի եպիսկոպոսությունը գեղեցիկ առիթ է հասարակական մեծարանքի և գնահատության:

Սրբազանը դեռ երիտասարդ է և գտնվում է իր ուժերի և գործունեության հասուն շրջանում: Ազգը, Եկեղեցին, երախտագետ զգացմունքներով նրանից սպասում են նորանոր ծառայություններ՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և ի մխիթարություն Մայր Աթոռի և հայ ժողովրդի:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԾՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵԼՍՏՅԱՆ



Գերաշնորհ Տ. Ծնորհք եպիսկոպոս Գալստյանը, ավագանի անունով Արշակ, ծնվել է 1913 թվին Յողկատի (Թյուրքիա) Իյդե գյուղում, գյուղացու ընտանիքում: Նա իր ծնողների երեք զավակներից կրտսերն է:

1915 թվի հայկական եղեռնի արյունոտ տարիներին, երբ բովանդակ թյուրքահայ ժողովուրդը տարագրվեց իր հայրենի շեն ու պայծառ օջախներից և հայ ժողովուրդը ապրեց իր ողբերգական Գողգոթան, այդ տխուր ու ճակատագրական օրերին, եղեռնի

զոհ գնաց նաև փոքրիկ Արշակի ամբողջ ընտանիքը: Մահից ազատվեցին միայն Արշակն ու մայրը, բայց մայր ու որդի մինչև այսօր իրար շեն գտած, որովհետև 1920 թվին փոքրիկ Արշակը, որբացած, ընկնում է նախ Թալաթի (Կեսարիա) Նիյր Իստ Ռելիֆի որբանոցը, իսկ մայրը՝ այլուր, ապա փոխադրվում է Ճիպեյի (Լիբանան) և հուսկ ուրեմն նազարեթի (Պաղեստին) որբանոցը, որտեղ նա ստանում է իր նախնական կրթությունը:

1927 թվին, որպես ուշիմ և ուսումնաստենչ պատանի, Արշակը ընդունվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը: Դպրոցում Արշակը իր ջանասիրությամբ, հեղահամբույր ընավորությամբ, մաքրակենցաղ վարք ու բարքով սիրելի է դառնում և՛ տեսչության, և՛ դասախոսական կազմին, և՛ աշակերտության:

1932 թվին փայլուն հաջողությամբ ավարտելով ժառանգավորաց վարժարանի դասընթացը և իր հոգում շատ վաղուց զգալով հոգևորականի կոչում, ուխտում է աննահանջ սիրով և բոլորանվեր ոգով ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և սարկավազ է ձեռնադրվում լուսահոգի Ս. Թորգոմ Պատրիարքից:

1935 թվին ավարտելով ընծայարանի աստվածաբանական դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում Թորգոմ Պատրիարքից, որը Արշակ սարկավազի հոգևորականության հատուկ ցուցաբերած շնորհալիության համար նրան վերանվանում է Տ. Ծնորհք արեղա:

Ձեռնադրվելուց հետո Տ. Ծնորհք արեղան նշանակվում է գավազանակիր սրբազան Պատրիարք հոր, ապա ժառանգավորաց վարժարանի փոխ-տեսուչ:

1936—1940 թվերին նա ձեռնհաստերն վարում է Ս. Հակոբյանց վանքի տպարանի տեսչությունը:

1940—1941 տարին նշանակվում է Հայֆա քաղաքի հայ համայնքի հոգևոր հովիվ, որ-

տեղ երևան է բերում իր վարչական ընդունակությունները:

1941—1944 տարիներին նշանակվում է Անթիլիասի դպրեվանքի տեսուչ և դասախոս, դասավանդելով հայոց լեզու, Հայ եկեղեցու պատմություն, Ս. Գրոց մեկնություն և գրարար լեզու:

Ապա շնորհալի Շնորհք վարդապետին տեսնում ենք հովվական պաշտոնում, գանազան թեմերում:

1945—1948 թվերին Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվն է նա: Այդ տարիներին ինքնօգնությամբ նա խորացնում է իր աստվածաբանական-եկեղեցագիտական գիտելիքները:

1948 թվին նա հրավիրվում է Ամերիկա՝ վարելու Նյու-Ջերզիի հոգևոր հովվությունը Տ. Տիրան արքեպիսկոպոսի Ամերիկայի առաջնորդության տարիներին, և խմբագրում է

Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի պաշտոնաթերթ «Հայաստանյայց եկեղեցի» ամսագիրը:

1953 թվին ընտրվում է Կալիֆորնիայի թեմի առաջնորդ և որպես այդպիսին մասնակցում է 1955 թվի սեպտեմբերին Մայր Աթոռում գումարված Ազգային-եկեղեցական ժողովին և հոկտեմբերի 6-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Վազգեն Ա. Հայրապետից:

Շնորհք սրբազանը մեր շնորհալի և հավատավոր հոգևորականներից մեկն է: Պարկեշտ, կարգասլահ ու մաքրակենցաղ եկեղեցական է նա, որ սրտառուչ հավատարմությամբ ծառայել է իր ժողովրդին և եկեղեցուն, բարձր կանգնած լինելով իր հոգևորականի կոչման և պարտականության դիրքերում, օրինակելի՝ իր նախանձախնդրությամբ և բժախնդրությամբ, իր բարեմույն և հեղահամբույր բնավորությամբ:

ԳԵՐԱՃՆՈՐՀ Տ. ՎԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ



Տ. Վարդան եպիսկոպոսը, աշխարհական անունով Պետրոս, ծնվել է 1878 թվականի հունվարի 15-ին, Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի Գյուլյաթաղ գյուղում, քահանայի ընտանիքում: Նա զավակն է Տ. Հուսիկ քահանա Տեր-Սահակյանի:

Սկզբնական կրթությունը ստացել է Ջրաբերդի շրջանի Կուսապատ գյուղի հնդամյա դպրոցում, որի դասընթացն ավարտել է 1892 թվին:

Մինչև 1896 թվականն իր ծննդավայր գյուղում գյուղատնտեսությամբ պարապելուց հետո, անցել է Շուշի և մտել Լեռնային Ղարաբաղի թեմական դպրոցը, որի լրիվ դասընթացն ավարտել է 1901 թվականին և անմիջապես նշանակվել ուսուցիչ՝ Ջրաբերդի շրջանի Ջանյաթաղ գյուղի դպրոցում, ուր պաշտոնավարել է մինչև 1904 թվականը:

1904 թվի հոկտեմբերի 20-ին, Ս. Էօմիածին գալով ներկայանում է երջանկահիշատակ Մկրտիչ Կաթողիկոս երեմյանին՝ Հայոց Հայրեկին և հայտնում Հայաստանյայտ Առաքելական եկեղեցուն ծառայելու իր ցանկությունը: Խրիմյան Հայրեկը իրավունք է տալիս քահանա ձեռնադրվելու:

Քահանա ձեռնադրվելով հայրենի գյուղի եկեղեցու վրա, Տ. Վարդանը շուտով շահում է ժողովրդի համակրանքը և նույն թվականին իսկ հրավիրվում է Հյուսիսային Կովկասի Գրոզնի քաղաքը, որտեղ քահանայագործում

է ուլիդ 25 տարի՝ 1904 թվից մինչև 1929 թիվը: Գրողնիում պաշտոնավարած շրջանում դասատու է եղել ռեալական և իգական գիմնազիայում, կազմակերպել է Բարեգործական ընկերությունը և Աղքատախնամ հանձնաժողովը, որոնց նախագահն ու ղեկավարն է եղել, կազմել է հարուստ գրադարան՝ 250 աշակերտ ունեցող ծխական դպրոցում:

1929 թվին տեղափոխվում է Բաքու, որտեղ միաժամանակ որպես ուսուցիչ պաշտոնավարում է մինչև 1945 թվականի հունվարի 5-ը:

1945 թվի հունվարի 7-ին ստանձնում է Բաքվի եկեղեցու ավագերեցի պաշտոնը, որը վարում է մինչև 1951 թիվը:

Տ. Վարդան քահանան զրկվում է իր կյանքի ընկերոջից և 1951 թվին, երջանկահեշտակ Գեորգ Չ. Կաթողիկոսի հանձնարարությամբ, մտնում է Ս. Էջմիածնի միաբանների շարքը և 1952 թվականի հունվարի 11-ին վարդապետական վեղար ստանալով, նշանակվում է Քբիլիսիի Ս. Գեորգ եկեղեցու վանահայր, որտեղ պաշտոնավարում է 2 տարի:

1954 թվի դեկտեմբերի 1-ից սկսյալ նշանակվում է Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի միացյալ թեմերի թեմակալ առաջնորդ— պատասխանատու պաշտոն, որը կատարում է նա մինչև օրս, ամենայն խճմըրտությամբ և գիտակցությունով:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՋՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋՆԱՎՈՒՐՅԱՆ



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյանը, ավագանի անունով Սենեքերիմ, ծնվել է 1880 թվականին Ալաշկերտի Թոփրակկալի գյուղաքաղաքում, երկրագործի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում, որ հիմնվել էր Կոստանդնուպոլսի Միացյալ ընկերության կողմից: Ձգտելով ավելի բարձր ուսման, պատանի ուսանողը, 1894 թվին, առ ոչինչ համարելով ճանապարհորդական դժվարություններն և արգելքները, գալիս է Ս. Էջմիածին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ ընդունվում է Գեորգյան Ճեմարանը, որի լրիվ դասընթացն ավարտելով 1902 թվականին, նույն տարին իսկ Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Բագրատ վարդապետի կողմից հրավիրվում է Նոր-Ջուղա՝ նորաբաց Քանանյան միջնակարգ դպրոցում ուսուցչության պաշտոնով:

1906 թվականին Կովկասում հայկական եկեղեցա-ծխական դպրոցների վերաբացման կապակցությամբ վերադառնալով Պարսկաստանից՝ ուսուցչական պաշտոն է ստանձնում Կարսի եկեղեցա-ծխական դպրոցում:

Ուսումը կատարելագործելու նպատակով գնում է Մոսկվա, որտեղ 1908—1909 թվականներին սովորում է Առևտրական (Коммерческий) ինստիտուտում, բայց ընտանեկան պատճառներով հարկադրվելով ընդհատել ուսումը, վերադառնում է մանկավարժական ասպարեզ և ուսուցչական պաշտոն վարում Կարսի և Արդահանի եկեղեցա-ծխական դպրոցներում մինչև 1912 թվականը: Նույն տարիներին, օգտվելով ամառային արձակուրդներից, նա անսայթաքորեն հետևում է Ղարաբաղիսայում (Կիրովականում) կազմակերպված գյուղատնտեսական-անասնապահական-կաթնատնտեսական դասընթացներին՝ ղեկավարությամբ Ալեքսանդր Քայանթարի և Ալեքսանդր Թամամյանի:

Առվտակառն-տարիներին նա աշխատում է Լենինականի, Կիրովականի և Երևանի մի

շարք հիմնարկություններում որպես հաշվապահ:

Պետական կարևոր պաշտոններում փորձառություններով օժտված, նա մտնում է հոգևորական կյանք և 1944 թվականի մարտի 1-ին ձեռնադրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան վարդապետ: 1945 թվականին նշանակվում է Ս. Գեղարդի վանքի

(Այրիվանքի) վանահայր: 1954 թվականի մայիսի 20-ից սկսյալ Ս. Եղնիկ վարդապետ Ազնավուրյանը պաշտոնավարում է Մայր Տաճարում որպես ժամօրհնող վարդապետ, երբ Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, սույն թվականի սեպտեմբերի 1-ին ստանձնում է Ադրբեջանի հայոց առաջնորդի պաշտոնը:

ԳԵՐՇՆՆՈՐՀ Տ. ՇԱՎԱՐԶ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ՝

Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ և ընտրյալ առաջնորդ, նորապսակ Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյանը ծնվել է 1908 թվին Կիլիկիայի Հաճըն քաղաքում: Փոքր տարիքից փոքրիկ Մատթեոսը (այս է եղել նրա ավագանի անունը), հավասար շափով բաժանել է հերոսական ու պատմական Հաճըն քաղաքի և իր հայրենակիցների տխուր ու արյունոտ ճակատագիրը և Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Դեյր էզ-Ջորի անպատաներում թափառելուց հետո, բազմահազար գաղթականների և իր ծնողների՝ Գալուստ Գույումճյանի և Երանուհի Քյոշկերյանի՝ հետ հաստատվել են Դամասկոս, ուր և իր առաջին նախակրթարանի դաստիարակություն է ստանում ուսումնատենչ փոքրիկ Մատթեոսը, ապա աշակերտում տեղի անգլիական կոլեջին:

Ռով, վանքի ղեկավարության որոշումով մեկնում է Լոնդոն, գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի հետ (այն ժամանակ վարդապետ) հետևելու Կինգզ կոլեջի աստվածաբանական փիլիսոփայության դասընթացներին:

Վանք վերադառնալուց հետո, զարգացած, բազմահմուտ վարդապետը իր ուժերն ու հմտությունը նվիրում է վանքի և հայ ժողովրդի ծառայության աշխատանքներին: Նա եղել է Երուսաղեմում Ս. Տեղյաց քարտուղար, Միաբանական ընդհանուր ժողովի և Տնօրեն ժողովի, Կրոնական գերագույն ատյանի անդամ, Ս. Աթոռի տպարանի տեսուչ, վանքի դիվանապետ:

Վարչական-վանական այս ծանր աշխատանքների հետ միասին Շավարշ վարդապետը դասախոսել է Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում իմաստասիրություն, ընդհանուր եկեղեցու պատմություն, հունարեն, կանոնագրություն:

1935 թվից հետո նա նույնքան ձեռնհասությամբ վարել է առաջնորդական-հովվական պաշտոններ:

1935—1938 թվականներին նա վարել է Պաղեստինի Հայֆա քաղաքի հայ համայնքի հոգևոր տեսչությունը և տեղի ազգային վարժարանի տնօրինությունը:

Շավարշ վարդապետը, որպես մեր հայրենասեր և հավատավոր հոգևորականներից մեկը, իր համալսարանական կրթությամբ, բազմակողմանի զարգացումով, իրավաբանական պատրաստությամբ, իր մասնավոր տեղն է գրավում մեր Սփյուռքի հոգևորականության շարքերում:

Շավարշ վարդապետը հետևել է Պաղեստինում իրավաբանության և ավարտելով Պաղեստինի պետական իրավաբանական վարժարանը, անդամ է ընտրվել Պաղեստինի օրենսդրական կաճառին, որպես ձեռնհաս, կարող և աչքի ընկնող վկայալ և արտոնյալ իրավաբան:

1949 թվին հոգևույս Տ. Գրեգին Վեհի համաձայնությամբ և կոնդակով նշանակվել է Կաթողիկոսական փոխանորդ Դամասկոսի թեմի: Շավարշ վարդապետն իր նոր ու պատասխանատու առաջնորդական այս պաշտո-

1924 թվին չորս ընկերներով մեկնում է Դամասկոսից Ս. Երուսաղեմ՝ աշակերտելու Ժառանգավորաց վարժարանում երջանկահիշատակ Տ. Եղիշե Պատրիարք Դուրյանին և հոգեւույս Տ. Բաբգեն եպիսկոպոս Կյուլեսերյանին: 1920 թվին մեծ հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի դասընթացը, սարկավագ է ձեռնադրվում, և մտնելով Ս. Հակոբյանց միաբանության շարքերը, 1930 թվին ավարտում է Ընծայարանի լսարանական բաժինը և կուսակրոն քահանա է ձեռնադրվում՝ օժակից ունենալով Տ. Սիոն, Տ. Հայկազուն, Տ. Սերովբե և Տ. Պարզե վարդապետներին:

Շավարշ վարդապետը Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության երիտասարդ և զարգացած միաբաններից մեկն էր հանդեսանում, որի առաջ բացվում էին վանական-վարչական, կրթական-դաստիարակչական պատասխանատու գործունեության շրջանակները:

1931—1933 թվականներին, որպես Կյուլեսերյանց սան, Կյուլեսերյանց հիմնադրա-

1. Գերաշնորհ Տ. Շավարշ և Տ. Պոսակ սրբազանների ձեռնադրությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 23-ին, բացառիկ հանգիսավոր իրադրության մեջ: Ենթահարալուծության այդ հանգիսության նկարագրությունը կտպագրվի մեր ամսագրի հաջորդ համարում:—Խմբ.:



նում երևան է բերում վարչական-կազմակերպչական անառարկելի ընդունակություններ. նա կազմակերպում է Դամասկոսի թեմի ազգային-եկեղեցական կյանքը, իմաստությամբ վարում է թեմական-վարչական մեքենան, գրավելով իր ժողովրդի անկաշառ, որդիական սերն ու համակրանքը և պետական շրջանակների վստահությունն ու աջակցությունը, իր շինարարական կրթական աշխատանքներում:

Շավարշ վարդապետը ընտրվել է ապա Դամասկոսի թեմի առաջնորդ պատգամավորական ժողովի կողմից:

1954 թվի ամռանը Շավարշ վարդապետը, առաջին անգամ լինելով, եղավ Մայր Հայրենիքում և Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ. Գեորգ Զ.ի մահվան տխուր առիթով, երբ եկել էր իր և իր հայրենասեր ժողովրդի սրտագին հարգանքը և վշտակցությունը բերելու. մեծ հանգուցյալի խնկելի հիշատակին:

1955 թվի սեպտեմբերին նա բախտ ունեցավ երկրորդ անգամ լինելու Մայր Հայրենիքում, իբր պատգամավոր իր թեմի՝ Ազգային-եկեղեցական ժողովում:

1955 թվի հոկտեմբերի 23-ին, ազգյա սիրելի Հայրապետը, բարձր գնահատելով Տ. Շավարշ վարդապետի ազգային-եկեղեցական գործունեությունը, իր հայրապետական բարձր ուշադրության արժանացրեց նրան և ձեռնադրեց եպիսկոպոս:

Ավելի քան 25 տարի է, ինչ Շավարշ վարդապետը աննահանջ սիրով և սրտառուչ հավատարմությամբ ծառայում է Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին, հայ Հայրենիքին: Նա ո՛ւր որ գնացել է, կոչման ձայնը ո՛ւր էլ որ կանչել է նրան, նա այդ ձայնի հոռից դնացել է անվարան, խոսել, գրել, աշխատել ու կազմակերպել է՝ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի առաջ իր ունեցած խորը պարտքի դիտակցությամբ:

Շավարշ եպիսկոպոսը իր բազմաշխատ վարչական աշխատանքներում, ժամանակ է գտել նաև զբաղվելու իբրև գրչի մարդ՝ կանոնագիտական, պատմական, բանասիրական աշխատանքներով: Նրա բեղուն գրչին են պատկանում մի շարք կարևոր ուսումնասիրություններ:

Շավարշ եպիսկոպոսը դեռ երիտասարդ է, դտնվում է իր ուժերի ծաղկման, բարգավաճման շրջանում: Նա զափնինների վրա հանդուտացողը չէ: Վստահ ենք, որ Շավարշ սրբազանը, իր նոր և բարձր պաշտոնում, աննահանջ սիրով և սրտառուչ հավատարմությամբ կծառայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ հավատացյալ ժողովրդին:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄՅԱՆ

Գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը ծնվել է Պարտիզակում (Կոստանդնուպոլսի մոտ) 1912 թվին, արհեստավոր ածխագործի ընտանիքում:

Փոքրիկ Բարգենը (այս է եղել նրա աշխարհական անունը) իր ծնողների երկրորդ երե-

խան է եղել, որն իր առաջին դաստիարակությունը ստացել է ընտանիքում, հայեցի շնչով և ազգային-եկեղեցական ոգով:

Փոքրիկ Բարգենը իր նախնական կրթությունը ստացել է 1919 թվին իր հայրենի դպրոցի դպրոցում, ապա իր ուսումը շարու-

նակել է Կոստանդնուպոլսում, Ազգային խնամակալության որբանոցում 1919—1922 թվերին:

1922 թվին, Բյուրքեյաում ստեղծված քաղաքական աննպաստ պայմանների բերումով, հաստատվում է Հունաստան, ուր մինչև 1926 թվականը որպես որբ մնում է Հունաստանի քաղաքներից Սիրայի ամերիկյան նիյր Իստ Ռելիֆի որբանոցում:

Պատանի Բարգենը, իր ստացած ընտանեկան բարի և հավատավոր դաստիարակության բերումով, պատանեկան վաղ տարիքից զգացել է իր սրտում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն ծառայելու կոչում:

Եվ ահա ուսումնասենչ պատանուն տեսնում ենք 1926 թվից հետո Երուսաղեմում, Հայոց Պատրիարքարանի Ժառանգավորաց վարժարանում սովորելիս՝ նվիրվելու համար հայ ժողովրդի հոգևոր սպասի նվիրական ծառայության:

Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի լրիվ դասընթացը փայլուն հաջողությամբ ավարտելուց հետո, 1930 թվին նա ձեռնադրվում է սարկավագ, դառնալով Սրբոց Հակոբյանց ուխտի անդամ:

Ապա ուսումնաձարավ ու ջանասեր Բարգեն սարկավագի առաջ բացվում են սուրբ-գրական դիտության, աստվածաբանության, փիլիսոփայության, հայ մատենագրության դոները:

1934 թվին նա մեծ հաջողությամբ ավարտելով Ս. Հակոբյանց վանքի Ընծայարանի դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում հոգևույց Ս. Թորոս Պատրիարքից՝ վերանվանվելով Ս. Պսակ արեղա:

Երիտասարդ, ժրջան, խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է վանքում գործունեության լայն ասպարեզ: Այդ տարիներում նա խորանում է մասնավորապես հայ շարականագիտության մեջ: Եվ ունենալով լրիվ ու քաղցր, կիրթ ձայն, նշանակվում է Ժառանգավորաց վարժարանի երաժշտության դասատու և Մայր Տաճարի դպրապետ, մի դործ՝ որ նա կատարում է սիրով և արդյունավետությամբ 1934—1938 տարիներին:

1939 թվից նշանակվում է վանքի ավագ թարգման:

Ապա երիտասարդ վարդապետին տեսնում ենք վարչական պատասխանատու պաշտոններում, որտեղ ի հայտ է բերում կազմակերպական իր ընդունակությունները:

1943—1949 տարիներին նա մեծ ձեռնհասությամբ վարում է Ալեքսանդրիայի թեմի առաջնորդական փոխանորդությունը, մեծ զարկ է տալիս իր թեմի ազգային-եկեղեցական կյանքին, եկեղեցու շուրջ է համախմբում կարևոր ուժերին, իր քարոզներով եկե-



ղեցուն կապում ժողովրդին: Նրա բարեսխամ ջանքերի շնորհիվ նորոգվում է Ալեքսանդրիայի Հայոց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, հայկական ճարտարապետության նոր նմուշների հավելումներով: Ս. Պսակ վարդապետի օրով Ալեքսանդրիայի հայ զաղութը ունենում է իր ազգային դարմանատունը:

1949 թվին հոգեշնորհ Ս. Պսակ վարդապետը նշանակվում է Լոնդոնի հայ համայնքի հոգևոր հովիվ: Նորին Ս. Օծուկյան Ս. Տ. Գեորգ Զ. Հայրապետն Իր հայրապետական կոնդակով հաստատում է Ս. Պսակ վարդապետի Լոնդոնի հոգևոր հովվությունը:

Լոնդոնի հայ համայնքը, Ս. Պսակ վարդապետի հովվության օրով, ապրում է կազմակերպչական մի նոր շրջան: Հոգևոր հովիվը առաջին հերթին Լոնդոնում զարկ է տալիս եկեղեցասիրության ոգուն և հոգևոր կյանքին, աշխատում է Եկեղեցու բարեգարդության և հոգևոր վարժողների ուղղությանը, իր հովվական մշտական այցելությամբ աշխատում է այդ մեծ ու ընդարձակ մայրաքաղաքում ցաք ու ցրիվ եղած հայ ժողովրդի բեկորներին հավաքել Հայաստանյայց Առաքե-

լական Եկեղեցու շուրջ, և նրանց սրտերը տաքացնել, հայ հավատի հրով և Հայրենիքի սիրով:

Տ. Պսակ վարդապետը աշխատել է Լոնդոնի եկեղեցական շրջանակներում բարձր պահել Ամենայն Հայոց Հայրապետության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը: Նա սրտագին հարաբերություններ է պահել հատկապես Անգլիկան Եկեղեցու և եկեղեցականության հետ: Հայ և Անգլիկան եկեղեցիների լավագույն հարաբերությունների սրտառուչ փաստն է հանդիսացել այն, որ Տ. Պսակ վարդապետի օրով, Նորին Սրբություն Քենտրբերիի արքեպիսկոպոսը ներկա է եղել Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի հրահանգով կատարված վարդանանց 1500-ամյակին նվիրված տոնակատարության և քարուղել է հայ ժողովրդին, քրիստոնեական ոգով և ջերմությամբ:

Տ. Պսակ վարդապետը Լոնդոնի իր հովվության տարիներում հետևել է Կինգզ կուլչի պատմական-աստվածաբանական, փիլիսոփայական և սուրբգրական մեկնության դասընթացներին: Նույն տարիներին խորացնելով իր հրաժշտական գիտությունը, նա

հետևել է Եկիլտ հոլ սկոլ ավ մյուզիք էնդ դրամա՝ ղասընթացներին երգի ու երգահանության և խմբավարության գծով, որոնց համար նա մոտ ժամանակներս կատանա երաժշտության դոկտորի բարձր կոչում:

1955 թվի սեպտեմբերին նա, իբր պատգամավոր Լոնդոնի հայ համայնքի, մասնակցել է Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովին, և առաջին անգամ լինելով ոտք դրել Հայրենի հողի վրա, ուխտավորի սրտառուչ հավատով և նվիրական մտածումներով:

1955 թվի հոկտեմբերի 23-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ազգիս նորընտիր Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա.ը, իր հայրապետական բարձր դնահատության արժանացնելով Տ. Պսակ վարդապետին, շնորհեց նրան եպիսկոպոսական աստիճան:

Նորապսակ Տ. Պսակ եպիսկոպոսը գտնվում է իր ուժերի ծաղկման և բարգավաճման շրջանում:

Մենք հույս ունենք, որ սրանից հետո էլ Տ. Պսակ եպիսկոպոսը, նոր եռանդով և աննահանջ սիրով կծառայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ հավատացյալ ժողովրդին:

